

## **Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

### **Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրեն Հարություն Մովսիսյանի գործուղման արդյունքների մասին**

#### **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Հարություն Մովսիսյան

#### **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության  
«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրեն

#### **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն (Հանոյ), 2024 թ-ի հոկտեմբերի 13-ից 18-ը

#### **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ**

Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ)

#### **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Ասիական զարգացման բանկի կողմից Հանոյում 2024 թվականի հոկտեմբերի 15-ից 17-ին կազմակերպվող «2024 RCI – Regional Cooperation and Integration Conference on Enhancing Critical Minerals for the Clean Energy Transition» խորագրով համաժողովին մասնակցություն:

#### **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

Համաժողովի ընթացքում, խորագրին համապատասխան քննարկվեցին և ներկայացվեցին մաքուր էներգիայի անցման համար կարևոր (կրիտիկական) օգտակար հանածոների արդյունահանման ծավալների և համաշխարհային պահանջարկի ավելացման հարցերը: Նշված համատեքստում կարևոր կարող է լինել Ասիական և Իսադաղ Օվկյանոսյան երկրների դերքը, որոնք համագործակցելով կարող են ապահովել մատակարարարման կայուն շղթաներ: Այն նաև կարևորվում է մինչև 2050 թվականը

զրոյական արտանետումներին սցենարում՝ հանածո վառելիքից դեպի մաուր էներգիային անցում կատարելով:

ԱԶԲ-ի կողմից կազմակերպված տարածաշրջանային համագործակցության և ինտեգրման 2024 թվականի համաժողովը հնարավորություն տվեց քննարկելու և հրավիրված մասնակիցներին ներկայացնելու ԱԶԲ-ի քաղաքականության ուղղությունները և տարածաշրջանային համագործակցության դերը մաքուր էներգիայի անցման և ածխածնային արտանետումների նվազեցման հարցում, մաքուր էներգիայի անցման համար կարևոր օգտակար հանաձոների արդյունահանման և մատակարարման ծավալների ընդլայնման քաղաքականությունն ու ռազմավարությունը, կիսվել կարևոր օգտակար հանաձոների վերաբերյալ մաքուր էներգիայի անցման համար գիտելիքներով և փորձով, ռաումնասիրել տեխնոլոգիաները և նորարարությունները և այլն:

Համաժողովի առաջին երկու օրերի (հոկտեմբերի 15-16) ընթացքում ԱԶԲ-ի և հրավիրված փորձագետների կողմից մասնակիցներին ներկայացվեցին խորագրին համապատասխանող թեմաներ, որոնք բաժանված էին հետևյալ 7 հիմնական ուղղությունների՝

1. Ածխածնային արտանետումների նվազեցման և մաքուր էներգիայի անցման քաղաքականությունը,
2. Մաքուր էներգիայի անցման համար կարևոր (կրիտիկական) օգտակար հանաձոների (մետաղների) ըմբռնումը,
3. Մաքուր էներգիայի անցման համար կարևոր (կրիտիկական) օգտակար հանաձոների (մետաղների) քաղաքականություններն ու ռազմավարությունները,
4. Մաքուր էներգիայի անցման համար կարևոր (կրիտիկական) օգտակար հանաձոների (մետաղների) ոլորտում տեխնոլոգիաները, տեխնոլոգիական առաջընթացն ու նորարարությունները,
5. Մաքուր էներգիայի անցման համար կարևոր (կրիտիկական) օգտակար հանաձոների (մետաղների) արդյունահանման, կիրառման և խթանման լավագույն փորձը,
6. Կրիտիկական օգտակար հանաձոների տվյալների բազաները,
7. Մաքուր էներգիայի անցման համար կարևոր օգտակար հանաձոների ռեսուրսները:

Երկօրյա նստաշրջանին հաջորդեց դաշտային այցելություն Բաք Նինի նահանգում տեղակայված Վիետնամ-Սինգապուրյան արդյունաբերական կենտրոն, որտեղ մասնակիցներին ներկայացվեց մաքուր էներգիայի և մաքուր տեխնոլոգիաների մասին պատկերացումներն ու գործնականում դրա իրականացումն արդյունաբերական համալիրում:

## **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ԵԼՈՒՅԹՆԵՐ, ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

Համաժողովի ընթացքում կլոր սեղանների շուրջ քննարկվեցին մասնակցող երկրների փորձը և իրենց երկրի քաղաքականություններում, ռազմավարություններում կամ օրենսդրական փաստաթղթերում մաքուր էներգիայի անցման համար կարևոր մետոդաների խթանմանն ուղղված համապատասխան կարգավորումները:

Ներկայացվել է, որ Հայաստանում ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի N 730-Լ որոշմամբ հաստատվել է «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների պլանը (մինչև 2035 թվականը)» և ռազմավարության փաստաթղթի մշակման գործընթացներում և գործողությունների պլանում ներառված ռազմավարական նպատակներին հասնելու համար սահմանված միջոցառումներում հաշվի են առնված մաքուր էներգիայի անցման համար կարևոր մետաղների համաշխարհային պահանջարկի ավելացման, մաքուր էներգետիկ ռեսուրսների և մաքուր տեխնոլոգիաների օգտագործման գաղափարները: Ռազմավարության գործողությունների պլանով, որպես ռազմավարական կարևոր նպատակ սահմանված է երկրաբանական միասնական թվային տեղեկատվական շտեմարանի ստեղծումը և երկրաբանական տեղեկատվության կոնսոլիդացումը, երկրաբանական թվային թեմատիկ քարտեզների կազմումը (կարող են ներառել կարևոր մետաղների հեռանկարային մետաղաձևական գոտիներ), ինչպես նաև միջազգային ստանդարտների համապատասխանության (CRIRSCO) ապահովում, շրջակա միջավայրի պահպանության և կրթության, գիտության ոլորտների հետ համագործակցության տարբեր միջոցառումներ, որոնք համահունչ են համաժողովում քննարկվող ուղղությունների թեմատիկային:

Ներկայացվել է, որ Հայաստանում տարբեր ծրագրերի շրջանակներում իրականացվել է ընդերքի մասին տեղեկատվության հասանելիության ապահովումը և առցանց հասանելի տեղեկատվության առկայությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականության տարբեր համակարգերը նպաստում են ներդրումային ծրագրերի գրավչությանը: Եվ որպես հաջորդ քայլ, նախատեսվում է երկրաբանական տեղեկատվության թվայնացումն ու

տեղեկատվության կառավարման թվային համակարգերի ներդրումը, ինչն առավել արդյունավետ կդարձնի ոլորտի կառավարումն ու կնպաստի տեղեկատվության մշակման և որոշումների կայացման համար ռեսուրսների կրճատմանն ու աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Նիստի ընթացքում ԱԶԲ-ի ներկայացուցիչների հետ առանձին քննարկվել են նաև հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության գործողությունների պլանով նախատեսված ռազմավարական նպատակների միջոցառումների իրականացման նպատակով համագործակցության հնարավորության հարցերը: ԱԶԲ-ի ներկայացուցիչների կողմից գովելի է համարվել նման միջոցառումների սահմանումը գործողությունների պլանում և հետաքրքրվածություն է ցուցաբերվել վիրջիններիս վերաբերյալ ավելի մեծ ուշադրությամբ անդրադառնալ իրենց տարածաշրջանային զեկույցներում:

## ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԿԱՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Համաժողովի ընթացքում փաստաթղթերի ստորագրման և ընդունման գործընթաց չի նախատեսվել:

### Հարություն Մովսիսյան

 Recoverable Signature

X 

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Signed by: MOVSISYAN HARUTYUN 2910840360

22 Հոկտեմբեր, 2024